ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՈՐՈՏ» ՍՊԸ-ն ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/103 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Լաբորատոր կղզի սեղան՝ պատրաստված է չժանգոտվող պողպատից և քիմիապես կայուն, ջերմակայուն և խոնավակայուն միաձույլ պլաստմասե նյութից՝ պողպատե ուղղանկյուն խողովակներից կազմված՝ կազմատվող շրջանակի հիմքով: Ուղղանկյուն խողովակների հատվածը՝ 60x30x2 մմ: Աշխատանքային մակերեսի նյութը՝ բաղադրյալ էպոքսիդային խեժերի վրա հիմնված պոլիմերային կոմպոզիտ, առնվազն՝ 16 մմ հաստությամբ, սեղանի եզրին ուղղահայաց, մակերեսից հաշված 7 մմ բարձրությամբ եզրով: Հատակի անհարթությունները շտկելու համար կարկասում նախատեսված են կարգավորվող հենարաններ (0-30 մմ): Սեղանը սարքավորված է դիմային և կողային էկրաններով, պատրաստված թերթապողպատից: Հանովի դիմային էկրանը ապահովում է անհրաժեշտ հաղորդակցությունների հասանելիություն և սարքավորված է մղլակներով: Աշխատանքային մակերեսին թույլատրելի բաշխված բեռնվածքը՝ - մինչև 500 կգ /մ²: Երկարություն՝ առնվազն 150 սմ, Լայնություն՝ առնվազն 150 սմ, Բարձրություն՝ առնվազն 75 սմ: Լրակազմ՝ առնվազն 3 հատ վարդակներ՝ կափարիչով, 220-240Վ, 50-60 հերց, IP 54 պաշտպանության մակարդակով, փակ պատյանով, 16Ա հոսանքի անջատիչ: Միացված սարքավորումների ընդհանուր հզորությունը առնվազն 3 կՎտ է: Լրակազմը ներառում է առնվազն 2 մ երկարությամբ մալուխ՝ խրոցակ եվրոպական ստանդարտ երկժանիով՝ առնվազն 2 հատ: Լվացարան՝ 25x10 սմ, խորությունը՝ 15 սմ, լրակազմով, որը ներառում է բոլոր անհրաժեշտ խողովակները ջրամատակարարման և ջրահեռացման ցանցին միանալու համար: Նշված ապրանքի երաշխիքային ժամկետը՝ առնվազն 1 տարի: Պայմանագրի կատարման փուլում լրակազմում նշված ապրանքի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից

	երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Մատակարարումը և տեղադրումը պատվիրատուի աշխատասենյակ մատակարարի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ՈՐՈՏ» ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/103 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	